ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2023 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 4 նիստի

Ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ, դեկան Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ քվորումն առկա է և առաջարկեց հաստատել օրակարգը:

Բաց քվեարկությամբ ներկաները միաձայն կողմ քվեարկեցին:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- «Լրագրություն» կրթական ծրագրի մոնիթորինգի արդյունքների մասին դեկան Ն. Մարտիրոսյանի հաղորդումը:

Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետում ձևավորված մոնիթորինգի խումբը բակալավրական «Լրագրություն» ծրագրի կրթագիտական բաղադրիչների ուսումնասիրման գործընթացը մեկնարկել է 2023 թ.-ի մայիսին: Արդյունքներն ամփոփվել են 2023-ի նոյեմբերի սկզբին: Ծրագրերի ղեկավարի ներկայացրած մոնիթորինգի հաշվետվության հիման վրա կազմվել է ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի եզրակացությունը: Ի մի բերելով մշտադիտարկման արդյունքներն ու եզրակացությունը՝ ամփոփ ներկայացնենք ծրագրերի մոնիթորինգի ընդհանուր պատկերը:

Մոնիթորինգի խմբի կատարած վերլուծությունները ներառում են կրթական ծրագրի քանակական բնութագրերի, ուսանողական և շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքների, ՈԱԿ-ի հատուկ մասնագիտական խմբի իրականացրած ուսումնասիրությունների համադրական քննություն: Առանձնացվել են ԿԾ-ի ուժեղ և թույլ կողմերը, վտանգներն ու հնարավորությունները՝ իրականացնելով կրթական ծրագրի SWOT վերլուծություն: Նշված բոլոր վերլուծությունների արդյունքում խմբի կողմից մշակվել է ծրագրի որակի բարելավման (բարձրացման) գործողությունների պլանը:

Ունենք ծրագրի կրթական չափորոշիչների բոլոր բաղադրիչների մանրամասն նկարագրություն՝ ծրագրերի արդիականություն, աշխատաշուկայի պահանջներին համապատասխանություն, ծրագրերի շահակիցների արձագանքների գնահատում, դասընթացների կրթական վերջնարդյունքների վերանայում, տեխնիկական, նյութական ռեսուրսների ապահովվածություն, ուսումնառության ժամանակակից մեթոդաբանության զարգացում, գործնական պարապմունքների ձևաչափի

թարմացում, մատուցման որակ, ընթացքում կատարված փոփոխությունների դրական և/կամ բացասական շարժընթացի արձանագրում և այլն:

«Լրագրություն» ԿԾ դիմորդների թիվը վերջին երեք տարիներին էականորեն կրճատվել է: Այդուհանդերձ արձանագրվել է գերազանց սովորող ուսանողների տոկոսի աճ և ծրագրից դուրս մնացած ուսանողների թվի նվազում: Ուսանողների և շրջանավարտների ընդհանրացված գնահատականներն արձանագրում են դրական պատկեր, չնայած որ նկատելի է կրթական հաջորդ մակարդակում ուսումը շարունակող ուսանողների թվի նվազում: Դասախոսական կազմի հետ կապված՝ ուսանողների կարծիքը բավական դրական է, չնայած որ որոշ դասախոսների հետ կապված՝ կան դժգոհություններ: Ուսանողները և շրջանավարտները ծրագրի թույլ կողմերից են համարում գործնական կարողությունների փոխանցման ցածր մակարդակը և նյութական ռեսուրսների սակավությունը: Ծրագրի շրջանավարտների զբաղվածության իմաստով ունենք դրական տեղաշարժ:

Մոնիթորինգի խմբի կողմից նախանշված ծրագրի որակի բարելավման (բարձրացման) գործողությունների պլանը լիովին արտահայտում է ծրագրի թույլ կողմերի հետ տարվելիք աշխատանքները:

Առաջնահերթությունների շարքում են դիմորդների հետ տարվող աշխատանքների ակտիվացումը, գործնական հմտությունների զարգացումը, ֆակուլտետի տեխնիկական վերազինումը, պրակտիկայի արդյունավետության բարձրացումը, արտաքին համատեղությամբ դասախոսների աշխատանքի արդյունավետության բարձրացումը, կրթավճարների թվի ավելացումը, ֆակուլտետում բացվող փորձարարական TV-ի մոնետիզացումը և այլն:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Դ. Վ. Պետրոսյան, Ա.Ռ. Մենեմշյան, Ն. Է. Վարդանյան, Ա. ՅՈՒ. Երզինկյան, Է. Հ. Պողոսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Մշտադիտարկման արդյունքներն ընդունել ի գիտություն և ներկայացնել ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի միջնորդությունը Ն. Վարդանյանի, Ա. Մենեմշյանի և Ս. Գրիգորյանի հեղինակած «Մեդիափոխակերպումներ և մեդիաազդեցություն» վերնագրով մենագրության լրամշակված տարբերակը տպագրության երաշխավորելու հարցը:

Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Աբրահամյանը նշեց, որ մենագրությունը նախապես ուղարկվել է

ամբիոնի աշխատակիցներին: Ամբիոնի նիստում տեղի է ունեցել քննարկում, որի ընթացքում դրական կարծիքներ են հնչել, եղել են նաև որոշակի դիտարկումներ, որոնց հիման վրա լրամշակվել է մենագրությունը:

Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչ Դ. Պետրոսյանը նշեց, որ համամիտ է գործընկերոջ հետ, և որ երեք հեղինակներն էլ մեդիայի զարգացման արդի միտումների վերաբերյալ հետաքրքիր, կարևոր և արժեքավոր դիտարկումներ են կատարել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Գ. Մ. Աբրահամյան, Ն. Է. Վարդանյան, Մ. Մ. Կարապետյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ. – ա)Ն. Վարդանյանի, Ա. Մենեմշյանի և Ս. Գրիգորյանի հեղինակած «Մեդիափոխակերպումներ և մեդիաազդեցություն» մենագրության լրամշակված տարբերակը երաշխավորել տպագրության:

բ) Դիմել ԵՊՀ հրատարակչություն՝ մենագրությունը 100 օրինակ տպագրելու խնդրանքով:

ԼՍԵՑԻՆ.- Ա. Մենեմշյանի հաղորդումը 2023/24 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Նշվեց, որ ժամանակացույցը արդեն պատրաստ է և ուղարկվել է ուսանողներին: Գործընթացը կվերահսկվի ֆակուլտետային գրասենյակի կողմից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Գ. Մ. Աբրահամյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Դ. Պետրոսյանի և Գ. Աբրահամյանի հաղորդումը ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Դ. Պետրոսյանը և Գ. Աբրահամյանը տեղեկացրին, որ գործընթացը բնականոն կերպով ընթանում է:

Հանդիպումները գիտղեկավարների հետ կրում են պարբերական բնույթ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Զ. Զ. Սարգսյան, Է. Հ. Պողոսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Հայ-ռուսական համալսարանի միջնորդությունը նույն բուհի Ժուռնալիստիկայի ամբիոնի ասպիրանտ Վլադիմիր Վյաչեսլավի Չիլինգարյանի գիտական թեման հաստատելու և գիտական ղեկավար նշանակելու խնդրանքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Զ. Զ. Սարգսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Վլադիմիր Վյաչեսլավի Չիլինգարյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Մուլտիմեդիա լրագրություն. Հայաստանի և Ռուսաստանի առցանց ԶԼՄ-ների լեզվառճական առանձնահատկությունները»:

բ) Գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆեսոր Դ. Վ. Պետրոսյանին:

ԼՍԵՑԻՆ.-Ժուռնալիստիկայի ֆակուլտետի Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի միջնորդությունը՝ «Հեռուստալրագրություն» մագիստրոսական ծրագրի մագիստրանտ Անահիտ Սերժիկի Հախվերդյանի մագիստրոսական թեզի թեման վերախմբագրելու և նոր գիտական ղեկավար նշանակելու առաջարկով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Հաստատել Ա. Ս. Հախվերդյանի մագիստրոսական թեզի թեման վերախմբագրված տարբերակով՝ «Արցախյան պատերազմի լուսաբանումը հայաստանյան և ադրբեջանական մեդիայում (2020 թվականի 44-օրյա պատերազմի և հետագա զարգացումների օրինակով)»:

բ) գիտական ղեկավար նշանակել բ. գ. թ., դոցենտ Վարդուհի Գևորգի Պետրոսյանին:

ԼՍԵՑԻՆ.- Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի մասնակցությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներում հետազոտություններ - 2024» մրցույթին երաշխավորելու խնդրանքով:

Դ. Պետրոսյանը տեղեկացրեց, որ նախագծի վերնագիրն է «Հայ պարբերական մամուլը՝ որպես իմագոլոգիական գործիք. 19-րդ դարի երկրորդ կես և 20-րդ դարասկիզբ»:

Ծրագրի նպատակն է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում ներդնել նոր հետազոտական ուղղություն՝ ներգրավելով երիտասարդ կադրերի և արտերկրի գիտական ներուժը, ստացված արդյունքները կիրառել ուսումնական գործընթացում:

Ծրագրի տևողությունը 36 ամիս է:

Խումբը կազմված է լինելու 4 անդամից (այդ թվում՝ ղեկավարը):

Խմբի արտասահմանյան գործընկերն է Տոմսկի պետական համալսարանի Ռոմանա-գերմանական և դասական բանասիրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նատալյա Նիկոնովան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Ն. Է. Վարդանյան, Ք. Ա. Ալագուլյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ. – Երաշխավորել «Հայ պարբերական մամուլը՝ որպես իմագոլոգիական գործիք. 19-րդ դարի երկրորդ կես և 20-րդ դարասկիզբ» վերնագրով նախագծի մասնակցությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախաձեռնած «Հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներում հետազոտություններ - 2024» մրցույթին:

ԼՍԵՑԻՆ.- Ն. Մարտիրոսյանի հաղորդումը ֆակուլտետում իրականացվող միջմասնագիտական (միջդիսցիպլինար) մագիստրոսական թեզերի իրականացման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Մ. *Աբրահամյան, Դ. Վ. Պետրոսյան, Ն. Է. Վարդանյան, :*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն, իսկ գործընթացի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնել ԵՊՀ մագիստրատուրայի բաժին:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ